2/26.9/70

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
« 15 » 01 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ0009-21

Ձեռնարկողը՝ «Հայգյուղշիննախագիծ» ՍՊԸ
Քաղաք Երևան, Կիևյան 16

Գործունեությունը՝ ***Արթիկի թիվ 2 հիմնական դպրոցի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Շիրակի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0009-21

<<15>> 01 2021թ.

Շիրակի մարզի Արթիկի թիվ 2 հիմնական դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝ «Հայգյուղշիննախագիծ» («ՀԳՇՆ») ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝ Նախնական գնահատման հայտ
«Գ» կատեգորիա

Տեղադրման վայրը՝ Շիրակի մարզ,
Արթիկ համայնք

Ներածական մաս

Դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակներում նախատեսվում է Արթիկի թիվ 2 հիմնական դպրոցի կառուցումը:

Սույն ծրագրի նախագծումը կատարվել է «ՀԳՇՆ» ՍՊ ընկերության կողմից:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ապամոնտաժել/քանդել գոյություն ունեցող հին մասնաշենքը, ամրացնել գոյություն ունեցող մասնաշենքերից մեկը և կառուցել նոր մասնաշենքեր, որոնք նախատեսված կլինեն V-IX դասարանների աշակերտների համար, ներառյալ մարզադահլիճ՝ իր հանդերձարաններով, բուֆետ և այլ օժանդակ սենյակներ:

Նախատեսվող գործունեությունը՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի «ա» ենթակետի, հանդիսանում է «Գ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս

Շիրակի մարզի Արթիկի թիվ 2 հիմնական դպրոցը գտնվում է Արթիկ քաղաքի կենտրոնական մասում: Այն շրջապատված է ցածրահարկ կառուցապատված բնակելի տներով: Տարածքը հյուսիսից երիզում է հեղեղատար ջրանցքը, որը վերակառուցված է 2017թ-ին., հարավից սահմանափակված է Անկախության փողոցով, իսկ արևելք-արևմուքից՝ ցածրահարկ կառուցապատված բնակելի տներով: Դպրոցի հողատարածքը սահմանազատված է:

Դպրոցի տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 5980մ^2:

Նախատեսվող գործունեության շրջանակներում կառուցապատման և բարեկարգման բոլոր աշխատանքները նախատեսվում է իրականացնել դպրոցի ներկայիս տարածքի սահմաններում, որից.

- կառուցապատում՝ 2959մ^2,

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

- կանաչապատում (կանաչ գոտու, սիզամարգի և ծաղկանոցի ստեղծում)՝ 1304մ^2,
- բարեկարգում (ներքին բակ, սալվածքի և ասֆալտապման աշխատանքներ)՝ 1717մ^2 :

Գլխավոր հատակագիծը կազմվել է հաշվի առնելով տարածքի ռելիեֆային առանձնահատկությունները և կառուցվող շինությունների տեղադիրքը:

Հատակագծային լուծումներն ընդգրկվել են դասասենյակների, լաբորատորիաների, արհեստանոցների, սպորտդահլիճի, հանդիսությունների սրահի, ճաշարանի հարմարություններն ըստ գործող նորմերի: Դասասենյակները գոտևորված են ըստ I-IV, V-IX դասարանի աշակերտների բաշխման:

Դպրոցի հիմքերի համար հիմնատակ են ծառայելու տուֆերը, որոնց հզորությունը հասնում է 11մ:

Դպրոցական համալիրի նոր մասնաշենքների տանիքը լինելու է լանջավոր՝ արտաքին ջրահեռացմամբ և ջերմամեկուսացմամբ, նախատեսված է նաև շենքի ջրհորդանների հակասառեցման համակարգ:

Շինարարական աշխատանքների իրականացումը բաժանված է երկու փուլի: Առաջին փուլը նախապատրաստական շրջանն է (շինհրապարակի արտաքին տարածքի սահմանազատում ժամանակավոր ցանկապատով, լուսավորությունով և արգելափակիչ նշաններով, գոյություն ունեցող օդային մալուխի ժամանակավոր ապամոնտաժում, ժամանակավոր շինությունների տեղադրում գոյություն ունեցող մարզադաշտի տարածքում), իսկ երկրորդ փուլում իրականացվելու են հիմնական աշխատանքները (քանդման/ապամոնտաժման, շինարարական/մոնտաժման):

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունն իրականացվելու է ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում՝ դրանք վարձակալել այլ կազմակերպություններից:

Դպրոցի արտաքին և ներքին հարդարման հիմնական աշխատանքները ներառում են.

Արտաքին հարդարման աշխատանքներ՝

- ճակատային պատերի ջերմամեկուսացում,
- արտաքին դռների և պատուհանների ջեմամեկուսացում հանքաբամբակով,
- քիվի երեսպատում տուֆե սալիկներով՝ մետաղական ցանցի վրա
- որմնախարիսխի երեսպատում բազալտե սալիկներով՝ մետաղական ցանցի վրա,
- շենքի ամբողջ պարագծով բրեկչա սալվածքներով և բազալտե եզրաքարերով:

Ներքին հարդարման աշխատանքներ՝

- պատերի և բլոկների պատում նախ լավորակ գաջի և ցեմենտավազային շաղախով, իսկ հետո լատեքս լվացվող անփայլ ներկածածկով,
- միջնորմերի ծածկում լավորակ գաջի և ցեմենտավազային շաղախով, ծեփամածիկի հարթեցնող շերտով, իսկ հետո լատեքս լվացվող անփայլ ներկածածկով,
- սանհանգույցների պատերի երեսպատում ջնարակված խեցեգործական սալիկներով:

Դպրոցական համալիրը ապահովված կլինի վերելակով, հատուկ զուգարաններով և թեքահարթակներով, որոնք նախատեսված են հենաշարժային խախտում/հաշմանդամություն ունեցող աշակերտներին սպասարկելու համար: Հետևապես դպրոցի բոլոր ենթակառուցվածքները կլինեն մատչելի և հասանելի հենաշարժային խնդիրներ ունեցող յուրաքանչյուր աշակերտի համար:

02543163
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել լիցենզավորված շինարարական ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից:

Դպրոցական համալիրի բոլոր մասնաշենքերն ապահովված կլինեն հակահրդեհային սարքավորումներով և հիդրանտներով, ինչպես նաև տարհանման ելքերով: Բոլոր հարկերում աստիճանավանդակները և տարհանման ելքերը նախատեսված են ըստ գործող նորմերի և ապահովում են սեյսմիկ և հակահրդեհային պահանջները: Դպրոցի բոլոր մասնաշենքերում նախատեսված է ջեռուցման ներքին համակարգ, որի համար որպես ջեռուցման աղբյուր հանդիսանում է տարածքում նախատեսված կաթսայատունը:

Էներգախնայողության նպատակով նորակառույց շինության տանիքի վրա կտեղադրվեն 8 հատ արևային վահանակներ (6.9 կՎտ), որոնց արտադրված էներգիան կօգտագործվի դպրոցի էլեկտրական սնուցման համար, իսկ ավելցուկային էներգիան հաշվիչի միջոցով կտրվի էլ. ցանցին: Տաք ջրամատակարարում ապահովելու նպատակով կտեղադրվեն նաև արևային ջերմամեկուսացված կոլլեկտորներ:

Նախատեսված է տեսահսկման համակարգ, որի օգնությամբ կիրականացվի դպրոցի ներքին և արտաքին հսկողությունը, հրդեհային ազդանշանման ավտոմատ համակարգ, ինչպես նաև համակարգչային ցանց, զանգային և ժամավորման ցանցեր:

Դպրոցական համալիրն ունի ներքին բակ, որի վրա են բացվում ռեկրեացիոն գոտիների պատուհանները և պատշգամբները, և այն անմիջապես կապված է նաև ճաշարանի մեծ սրահի հետ:

Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը կմիանան գոյություն ունեցող արտաքին ցանցերին:

Նոր կառուցվող մասնաշենքերն ապահովված կլինեն տաք և սառը ջրամատակարարմամբ: Ջրամատակարարման սնման աղբյուր կհանդիսանա տարածքին կից և ներկայումս դպրոցի կողմից շահագործվող խորքային հորը:

Դպրոցի տաք ջրամատակարարման համար օգտագործվելու է արևային էներգիան: Այդ նպատակով նախատեսված է տեղադրել 1000լ տարողունակությամբ 2 ջերմափոխանակիչով ճնշումային ջրատաքացուցիչ բաք, որի ջերմամատակարարումն իրականացվելու է կաթսայից և տանիքում տեղադրող արևային ջրատաքացման համակարգից:

Դպրոցի գազամատարարարումը նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող գազատարից, որն ապահովում է ներկայումս գոյություն ունեցող դպրոցի կարիքները:

Ջեռուցման ցանցի նախագիծը կատարվել է համաձայն շինարարական նորմերի և կանոնների:

Կաթսայատանը նախատեսվում է տեղադրել 2 կաթսա, որոնք համալրված են ավտոմատ կառավարման այրիչներով:

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույց չի նախատեսվում, այն կառաքվի Արթիկ քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցից, մասնագիտացված տրանսպորտային միջոցներով և այնպիսի պարբերականությամբ, որպեսզի ապահովվի շին. աշխատանքների անընդհատությունը:

Շինարարական հրապարակը, ներառյալ շինանյութերի ժամանակավոր պահեստավորումը, թափոնների կուտակման վայրերը և այլն կազմակերպվելու է բացառապես դպրոցի վարչական տարածքի սահմաններում:

02543163
ՓՈՐՁԱԳՆՈՒՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Շինարարական աղբը շինհրապարակից պարբերաբար կհեռացվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր՝ ծածկով ապահովված բեռնատարներով:

Կենցաղային աղբի կուտակման համար շինհրապարակը ապահովված կլինի համապատասխան աղբամաններով: Կենցաղային աղբը, որի ընդհանուր քանակը շինարարության ողջ ընթացքում կանխատեսվում է մոտ 4500 կգ, կտեղափոխվի աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ՝ ավտոինքնաթափ, կցորդիչ-սալատեղափոխիչներ, ավտոամբարձիչ, ավտոբետոնապոմպ, էքսկավատոր, աշտարակային վերամբարձ կռունկ, բուլդոզեր-ամբարձիչ, բետոնատար մեքենա և այլն:

Շինարարության ժամկետը՝ ըստ օրացույցային ժամանակացույցի կազմելու է 2 տարի և 2 ամիս:

Շինարարությունում ներգրավված աշխատողների ընդհանուր թիվը՝ 80 մարդ է:

Շինարարական աշխատանքների ընթացքում հանվելու է 3200մ^3 ընդհանուր ծավալով հողային զանգված, որից հետլիցքի նպատակով օգտագործելու է 2241մ^3 (գրունտի հետլիցք խրամուղում՝ 524մ^3, հողաբուսաշերտի պահպանում և հետագա վերաօգտագործում՝ 391.2 մ^3): Մնացած, մոտ 568 մ^3 ծավալը՝ կտեղափոխվի աղբավայր:

Շինարարության ժամանակ բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանման, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու կենցաղային կարիքների համար:

Շինարարության ժամանակ ջրամատակարարման ջրի հիմնական աղբյուր է ծառայելու համայնքային ջրամատակարարման ցանցը:

Շինարարության փուլում ընդհանուր ջրօգտագործումը կազմելու է 1925,7մ^3: Շինանձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու նպատակով շինհրապարում կտեղադրվեն ժամանակավոր բիոզուգարաններ, որոնք կապամոնտաժվեն շինաշխատանքերի ավարտից հետո:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել սիզամարգերով և հիմնել ծաղկանոց, տեղադրել նստարաններ: Նախագծով նախատեսված է կանաչապատ տարածքի ամբողջական ոռոգում՝ ճկափողերի օգտագործմամբ:

Դպրոցի ներկայիս շինությունը, որը ենթակա է կազմատման, չի հանդիսանում պատմամշակութային արժեք և ներառված չէ պատմամշակութային հուշարձանների ցանկում:

Դպրոցի կառուցապատման տարածքը ներառված չէ հատուկ պահպանման գոտիների ցանկում և չի հանդիսանում հատուկ կարգավորման օբյեկտ:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում են մթնոլորտային օդի, հողի և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի և արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում.

- ջրցանի կատարում՝ շինարարության ընթացքում մթնոլորտային օդ փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով,
- սորուն նյութերի պահեստների ծածկում համապատասխան բարձրության թաղանթով,

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- սորուն շինարարական նյութերի և հողային զանգվածի տեղափոխում՝ փակ ծածկե մեքենաներով,
- շինարարական նյութերի տեղադրում՝ բետոնապատ մակերեսի վրա,
- շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերի ծածկում՝ աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով,
- շինհրապարակում թափոնների տարանջատում և աղբամանների տեղադրում,
- շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում շինարարական տեխնիկայի լիցքավորում և յուղում,
- հատուկ տակդիրների վրա հեղուկ նյութերի պահում՝ հնարավոր արտահոսքերը կանխելու նպատակով,
- մթնոլորտային օդ արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ անգամ,
- մեքենայի օգտագործված յուղերով ու քսայուղերով հողերը հնարավոր աղտոտումից պահպանելու նպատակով հողերի մշտադիտարկում՝ երեք ամիսը մեկ անգամ,
- շինարարության ընթացքում աշխատանքի և արտակարգ իրավիճակների անվտանգության կանոնների պահպանում:

Պատճառաբանական մաս

Նախատեսվող գործունեությունը իրականացվելու է ազգային օրենսդրության, մեթոդական և կարգավորող ընթացակարգերի պահանջներին, ինչպես նաև Ասիական զարգացման բանկի բնապահպանական ուղեցույցների, ձեռնարկների դրույթներին համապատասխան:

Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կրելու են ժամանակավոր բնույթ՝ պայմանավորված շինարարության փուլով:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են Շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներն, առողջապահության, արտակարգ իրավիճակների և կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններն ու Շիրակի մարզպետարանը: Հայտի լրամշակման փուլում հաշվի են առնվել նաև ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Արթիկի թիվ 2 հիմնական դպրոցի շենքում իրականացվել է հանրային քննարկում, որի ընթացքում հանրությունը կողմ է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

- Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը՝ ըստ հայտով ներկայացված պլանի, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության կանոններն ու նորմերը:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- Անհրաժեշտ է ապահովել հայտով ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումն ու պահպանումը:
- Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմինների հետ համաձայնեցված:
- Շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ, իսկ առաջացած կեղտաջուրը հեռացնել՝ միացնելով ջրհեռացման համակարգին:
- Կառուցապատման աշխատանքների ժամանակ՝ ՀՀ Օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանել արտանետվող փոշու և առաջացող աղմուկի ու թրթռումների թույլատրելի մակարդակը:
- Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին, հնարավորինս նվազագույնի հասցնելով աղմուկի մակարդակը և ճանապարհների բեռնվածությունը:
- Պարսպապատել շինարարական հրապարակները, իսկ ներքուստ և արտաքուստ վերանորոգվող շենքերն ու շինությունները՝ ծածկել շինարարությանը համապատասխան բարձրության անթափանց թաղանթով:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Հայգյուղշիննախագիծ» («ՀԳՇՆ») ՍՊ ընկերության կողմից ներկայացված Արթիկ թիվ 2 հիմնական դպրոցի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝ Մ. Ավետիսյան